նէութեան բնորոշ յատկութիւնը եղաւ:

Նախ և առաջ 365 թ. Աշտիշատի Ս. ժողովի սահմանադրութեամբ Մեծն Ներսէս գինուեցաւ հեթանոսութիւնից մնացած մի քանի բարբարոս սովորութիւնների դէմ: Ժամանակի սխալ աշխարհահայեցողութեամբ մարմնով արատաւոր անձինք, զանազան ախտերով վարակուած անձինք գրեթէ զրկուած էին գոյութեան իրաւունքից: Սոցա անգթաբար հալածում էին բնակութեան ամէն տեղերից: Նոցա միակ ապաստանարանները անապատներն ու ամայի վայրերն էին: Խեղճ աղքատներն ու արտաքին հովանաւորութեան վերջին ծայր կարօտեալներն անգամ զրկուած էին ամէն տեսակ մարդասիրական խնամքից: Կարծես թէ քրիստոնէական գթասրտութիւնը անհետ վերացած էր ամենուրեք: Ս. Ներսէս առաջինը եղաւ, որ օգնութեան և պաշտպանութեան ձեռք կարկառեց տառապեալներին, նոցա միակ մխիթարիչը եղաւ: Կարճ ժամանակամիջոցում քրիստոնէական սիրով տոգորուած Ներսիսի նախաձեռնութեամբ և պետութեան հովանաւորութեամբ բարեգործական հաստատութիւններ՝ որբանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ, հիւրանոցներ հիմնուեցան երկրի զանազան գաւառներում: Իսկ Մեծ Հայրապետի անձնական օրինակը ամէնքին դէպի ողորմածութիւն յորդորեց: Իշխանների առատաձեռն նուէրներով՝ աւաններով և ագարակներով, իսկ ժողովրդի ամէն տեսակ տուրքերով այդ հիմնարկութեանց գոյութիւնը ապահովուեցաւ: Եւ «էր այնուհետև տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս բարբարոս պանդխտելոյ», վկայում է Խորենացին, «այլ որպէս զքաղաքացիս համեստացելոյ». վասն զի ժողովուրդն իւր վրայ առաւ կարօտեալներին օգնելու, անհատներին պաշտպանելու, տնանկներին զարմանելու բարոյական և եղբայրսիրական պարտքը:

Մ. Ներսէս այսքանով չբաւականացաւ: Այս հիմնարկութիւնները ժամանակի ծախող աւերիչ ճիրաններից պաշտպանելու և նոցա գոյութիւնը յարատևելու համար, ուրիշ խօսքով, մարդասիրութեան գաղափարը ժողովրդի մտքի մէջ միշտ վառ և կենդանի պահելու համար, անհրաժեշտ էր այդ բոլորի վրայ հսկող և հոգացող մի ազդեցիկ ոյժ պատրաստել: Այդ ոյժը վաղուց արդէն ընձեռել էր Հայ ազգին իւր Լուսաւորիչը: Դա Հայաստանեայց եկեղեցին էր. դա Հայոց հոգևորականութիւնն էր:

Ժամանակի ընթացքում հասունացած այդ պահանջը քաջ ըմբռնելով Մեծն Ներսէս՝ իւր ուշադրութիւնը կենդրոնացրեց եկեղեցական կեանքի կազմակերպութեան վրայ, վանքերի և եկեղեցիների՝ թիւը աւելացրեց. վանականութիւնը վայելուչ դիրքի և բարձրութեան հասցրեց: Այլևս վանականները, եպիսկոպոսները, միայնակեացները գիւղերում և քաղաքներում դատարկաշրջիկ թափառելու փոխարէն բարեգործական տեսչութիւն ստացան և ս. Աւետարանի քարոզութեան պաշտօնի կոչուեցան: Ժամանակակից պատմչի խօսքերով ասելով. «Եւ յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն երկիրս Հայոց և յուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծագեաց . . . . կարգեցան կարգ կաթուղիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն և պաշտօնէիցն յաճախութիւն: Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս և յանշէնս»: Իսկ այս բոլորի շունչ և կենդանութիւն տուողը՝ եկեղեցիներին կից հիմնուած դպրոցներն էր, որտեղ ծաղկեցաւ յոյն և ասորի դպրութիւն և որոնք ժամանակին նշանաւոր գործիչներ մատակարարեցին ազգին: Այդ անդրանիկ գործիչներից մինն էր և Խադ սարկաւագը:

(Շարունակելի). ՂԵՒՈՆԴ Ս. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Մեր նախնի եկեղեցասէր Հայրերի գրաւոր վաստակները այլ իմն սիրով ու սրտով մեծարող Ազգիս քաջարթուն Հովուա-

պետի ցանկալի հրամանի համաձայն, «Արարատի» միջոցաւ հետզհետէ դալիս ենք ի լոյս ընծայել՝ որպէս շարականների և նոցա հեղինակների մասին մեր արած դիտողութիւնները, այսպէս էլ Մայր Աթոռս Ճոխ մատենադարանի 73 օրինակ հազուագիւտ ձեռագիր Շարականներից՝ անցեալ տարի մեր ձեռքով քաղած 243-ի չափ ընտիր ընտիր նորագոյն շարականները, որոց խմբից իրրև մի հոտանոյշ շուշան, ահաւասիկ տալիս ենք տպագրութեան մի ոմն Յոհաննէս քահանայի ճարտար գրչի և մտքի արդիւնքը— «Անթառամ սիրոյ ծնունդք», որը լինելով աւելի մի անսահման սիրոյ երախայրիք, քան թէ մի պարզ շարական, յիշեալ սրբասէր քահանան բուռն զգացմունքով իւր սրտի սիրոյ տաճարից դուրս ծորելով՝ նուիրում է ասնելի Վարդանանց յիշատակին, Վարդանանց՝ որոնք ամենապարեցին ամբարիշտ Յազկերտի ձեռքից օր առաջ մահ խլել, քան թէ հաւատափոխութիւն թեւակոխելով՝ շունչ պահել երկար տարիներ և ճոխանալ նրա խոստացած աշխարհային այլ և այլ փառքերով և մեծութիւններով։

Այն ձեռագիր Շարականը, որից մենք զգուշութեամբ օրինակեցինք յիշեալ «Անթառամ սիրոյ ծնունդք»ը, կրում է իւր վերայ 1588—ժէ թուականը, բաղկացած է 237 քառածալ թերթից և ունի լայն լայն լուսանցքներ։ Շարականիս գրիչն՝ է Սարգիս երէց, որը մի գրիչ կարմիր մելանով սուրբ Յովհաննէս Մկրտչի— «Երկնաքաղաքացին Յովհաննէս» շարականի տակ առանց ազգանուան և տարեգրութեան պահել է աննկատելի իւր այս յիշատակարանը. «սուրբ Մկրտիչ քի· ի գալատեան ան յիշեա զմեռելս հոգւով· զսարգիս· երէց· գծող·»թ·154։

Շարականս թէև թուական չունի, սակայն գրչի՝ իւր լեզուով մի բան բացատրելու ոճից և գրուածքից և թէ շարականների մէջ գործ դրած իւր գրութեան եղանակից կարելի է եզրակացնել, թէ նա ո՞ր դարումն է ապրել և գրել իւր այս հազուագիւտ մատեանը։ Ցօնացոյց կամ Հարցնացոյց և Աւետարանացոյց կոչուած գրքերը, որոնք շարականիս մի մասն են կազմում և գրուած են իւր վերջում, ասում է գրիչը Ցօնացուցում։— «Հանգատեն հարցներուն խրատքն ի գրոցս վերջքն է գրբած»։ «Պահք յիսնակամտին· Ով խոհեմդ· թէ ապաշխարութեա հցներն ինչուրվի պատն լինել լինի· նա զորդ է· եւ թէ պակասել լինի· նա զտեղնին ասա· կամ ապցմի հցներ ասա· Ապա երբ ի յիսնակաց պահս գաս· նոր սկիզբն արա ապաշխարութեա հարցներոյն»։ «Բուն բարեկենդանին կիրակէ· նաւուն· Զինչ ձայնն լինի· ի բաց թող· և վերջի ասա· Որ գաս· որ այս տարի զբնաձայներն է ունեցել· զկողմն այն գասն առնու· եւ որ ըզկողմն է ունեցել· զբնաձայնն առնու»։ «Կիրակ· հցն· յարութեա· Սիրելի· ինչուրվի հաւատ· բ· բ· ասացած է յարութեա հցներն· յաստից ի հետ թէ ինչվի խաչին պահքն աւելի լինի· նա զու ինչուր ի վառ հցն· բ· բ· ասա ու սահմանէ որ խաչին բարեկենդանին· զվառն ասա· Անճառելի բնութիւնդ հերենէաբ է»[1]· թղ· 225՝՝՝· 227բ· 230բ· 226՝՝։

Ձայնացոյցները գրուած են Յա· ՅԲ· ՅԳ· ՅԴ· ԷԱ· ԷԲ· ԷԳ։

Շարականներ· «ԷԱ· Զմեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ· զոր հոգոց լուսատուն ի պաշտպանէն իւրմէ լուեալ· եթէ տաւն մեծ է այսօր իմն գասուն որ ի յերկինս»։ Գրիգոր Վիսյաւէր· թղ· 102բ։ «Յարեւլից մինչ ի մուտս· ի հիւսիսոն և ի հարաւոյ···» «ՅԳ· Արեգակն արդարութեան քս ծագեալ յաշխարհ հալածեաց զխաւարն անգիտութեան· և յետ մահու և յարութեան համբարձս առ հայր···» «ԷԲ· Ի հայրաշարժ յաղթիւրէն · · · » «ՅԲ· Նոյն և նրման հաւր և որդոյ հոգիդ անեղ և համագոյ···» «ՅԲ· Նաեւ սիրով հայրըս զրթած ի քս ստեղ·» «ՅԴ· Այսաւր անմեղ սրմանդունքն···» Նէրսէս Շնորհալի· թղ· 98՝՝՝· 147՝՝՝· 150՝՝՝· 144՝՝՝· 99՝՝՝ և 188բ։ «ԷԱ· Այսաւր մեծ աւետիք ադամա···» «ԷԱ· Ամենն հաւատս հարցըն սրբոց···» Նէրսէս Լամբրոնացի։ թղ· 126՝՝՝ և 163՝՝՝։ Խաչի· ՅԳ· Ոչ մկ· — «Իսկ զու պարծանքըս պարծա-

1· Բառիս միտքը յետոյ կպարզենք։

նաց գեղարդքա սբ և գերազանց...» Վարդան Վարդապետ. Թղ. 180՝։ «...։ Արեղականն արդարութեան ծագման արաւսեակը առաւաւտեայ...» Գրիգոր Սկևռացի. Թղ. 155՝։ և այլն։

Շարականիս սաացողը և երկար տարիներով նշանաւոր և բազմաթիւ օրինակներից գրեաւուողը եղել է իւր Մեկենասի ասելով «տր յոհաննէս և երկանուանս լուսն». ահա իւր անթուական և եղծուելու մօտ մի սակաւատող յիշատակարանը. «Աղաչ[եմ]ք [յա]յսմ վայրի. զածասէր և զբարես[է]ր կարդացողդ և զածային ահնութեաց արժանի լսողդ. սրա[ի] [մա]աւք և ախորժելի կամաւք. յիշելը արժանի արարէք. զսաացող սբ գրոցս. զտրուպս. և զեղկելիս զտր յոհաննէս. և երկանուանս լուսն. որ միայն անուանս է և ոչ գործս զի մեծաւ յուսով և ըղձմամբ փափագանաւք և ջանիւ ետու գրել զսա և յոյժ աշխատեցաւ գրիչ սորա ի բազում աւրինակաց գրելը. եւ փարթամացուցաք զսա յոյժ. որպէս և տեսանէք իսկ. ոչ յաղագս մարմնաւոր ինչ շահավաճառութեան այլ հոգևոր եւ ածային յիշատակ բարեաց. եւ պատճառ յիշելը և ած ողորմի ասելը. եւ որք ած ողորմին սրտի մտաւք ասեն և զամէնն. և նոցա ողորմեսցի քս ած ահնեալն յաւիտեանս». Թղ. 237՝։

Շարականս առանց նկարների և պատուճանքների գրուած է, փոքր ինչ հաստ, յղկած, կոշտ և ժժգոյն թղթի վերայ Բագրատունեաց օրօք ընդունուած երկաթագիր կարմիր գլխատառերով, մաքուր բոլորագրով և իրար հետ միացած բառերով և աւելի ժամանակի հնութիւնից քան թէ, շատ գործածուելուց՝ շիկացած է, իւր թանաքը, ուստի և շատ տեղ եղծուած են տառեր և շատ սակաւ ամբողջ բառեր։ Ունի կարմրաժեռ կաշիով պատած հաստ ու պիրկ գեղեցիկ կազմ, որի երկու երեսները շուրջանակի զարդարուած են՝ հանդոյց հանդոյց երկու կողմից ճնշած և իրար հետ միացած օձապտոյտ սիներով։ Կազմի առաջին երեսի կետրոնում՝ անյիշատակ գերեզմանների նման՝ գրուած է մի հատ խաչարձան, վերուվայր իրար հետ շղթայուած չորս հատ պատուճաղարդ խաչերով. իսկ կազմի միւս երեսի պորտում կայ մի բոլորաձև պատկ, կրելով իւր վերայ վերուվայր, վայրուվեր, ձախուաջ, աջուձախ չորս հատ բերանաբաց կարկինաձև նշաններ։

Այն շարականները, որոնք վաւերական ճանաչուած երգումեն արդէն եկեղեցումն նրանցից տարով ու դարով աւելի հնագոյններ՝ այն է, Փրկչական 426 թուից մինչև 1129 թիւը, որ ասել է Ե-րդ դարից մինչև ԺԱ-րդ դարը կամ ս. Սահակ Պարթևից մինչև Յովհաննէս Սարկաւագ վարդապետ կոչեցեալը՝ գրուած են կրճատ ձևով, այսինքն բառերը ամբողջովին չգրած, այլ թերատ և շատ անդամ բաց թողած ամբողջ նախադասութիւններ, ամփոփելով մի տունը մի տողի մէջ։ Իբրև ապացոյց մեր խօսքերին մէջ ենք բերում այստեղ ս. Սահակի և Յովհաննէս Սարկաւագ վարդապետի գրած շարականներից մի մի օրինակ, գրելով նախ նրանց ըստ տպագրեալ Շարականի՝ ամբողջովին, իսկ ըստ Գրչի՝ կրճատ։

Ըստ տպագրեալ Շարականի. Կանոն Դեղի Հինգշաբաթին. օրհ. գյ.—Վերաձգողն երկնից մշանջենաւոր հօր որդին. ներգործեալ իմովս ի վեր քան ըզհրաշս. ծառայի առեալ ըզկերպ անկողոպտելի աստուածութեամբ։ Ըստ Գրչի. «Կանոն Դեղի հինգշաբաթին Ա-ՐՀՆՈ-ՐԷ. յգ. Վերաձգող. մշտ. ըդ. ներգ. ի վ. ծառ. անկող. աստ.» Ս. Սահակ Պարթև. Թղ. 113՝։

Ըստ տպագրեալ Շարականի. Կանոն ԱՐՕՐ Ղևոնդեանց. ճշ. հբ. դյ.—Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք լուսաւորչօք կենդանեօք, որք ի գործոց իւրեանց ծաւալեցին զլոյսն անլսաւեր հայելի աչաց զաէր սիրողաց։ Ըստ Գրչի. «Շ-բաթն ԱՐ Ղևոնդեանց. յգ. ա. Պայծառաց. աւ. լուսաւորեա. որք ի գ. ցին. զ. հա. զտր.» Յովհաննէս Սարկաւագ վարդապետ. Թղ. 206՝։

Իսկ Փրկչական 1105 թուականից մինչև 1253, որ ասել է ԺԱ-րդ դարից մինչև ԺԳ-րդ և կէս դարը կամ Գրիգոր վկայասէրից մինչև

Յակոբ Կլայեցի կաթուղիկոսը՝ գրուած են բաց ձեռով, այսինքն բառերն ամբողջովին գրած. զո. «Կանոն. Ա-Խաչաց։ Ա.Ժամանակն. Ա-ԼՀՌ-ՐԿ ամ. Խորհուրդն անձառ ծածկեալն յայտնաց և յաւիտեանց. յայտնեցաւ իմամբ հրեշտակապետին. այսուր առ կոյսն մարիամ զոր առ ակր ունիմք բարեխաւս վս անձանց մերո[ց]. Կիրակէ՝ ՁԼ։ յ-էլ։ Թղ. 6՝՝։

«Կանոն ածածանին ընդ գրչառանն ի յովանիմայ և յառնայէ. գԼ. Երգեցեք որդիք սիոնի երգ նոր ի ծնընդեան մաւր ան. քանզի որ ծնաւ զանժամանակն ի հաւրէ ծնեալ. այսաւր ծնաւ յամուլ յարգանդէ. տուք աւրհնութիւն տուողին մեզ ըզմայրն լուսոյ. Յաղոթ ելոյեցի. Թղ. 1՝՝։

Մի կողմ թողնելով մեր եկեղեցական բարեպաշտօն հայրերի ու հայրապետների սուրբ եկեղեցւոյ ծոցին պահ տուած յիշեալ գրերի շարականները, այլ և կան սոյն հարուստ ձեռագրիս մէջ և 162 հատ մին քան զմիւսն լաւ և տակաւին չերգուած շարականներ, որոնցից 16 հատը բազմաշխատ Գրիչը գրել է բաց և կրճատ ձեւով, իսկ մնացածը բաց ձեւով, և իւր այս խորագրով՝ «Յաղագս Ոգոյ հին. Ի նոր շարականաց։ Ի-Երգեցին Յոմանք. Ասացան» Յուցակի մէջ առաւելապէս ընծայում է նրանց ԺԱ և ԺԲ-րդ դարերի շարականների հիմնադիրներին, առանց մէջ բերելու «Խորհուրդ խորին» երգող Խաչատուր Ցարօնեցուն, սուրբ Լուսաւորչի գովքն անող Պլուզ Յոհաննէս վարդապետին և սուրբ Աստուածածնին պրբութեան տումար անուանող Կիրակոս Արեւելցուն, միանգամայն և առանց արձանագրելու իւր թանկագին Շարականի մէջ և այդ բազմաշխատ վարդապետների գեղեցիկ գրուածքները, որոնք ըստ իս կամ Մեկենասի և Գրչի ձեռքը չեն հասել, կամ թէ նոքա տակաւին եկեղեցիներում գործածութեան առնուած չեն եղել, և կամ թերևս այդ վարդապետների երեսը չեն տեսել։ Մեկենասը Շարականիս որպիսութեան մասին ասում է իւր Յիշատակարանում. «Ի- ֆալմոսոյսոյ ը՝՝ յոյժ. որդէ՝ և պէտանէ՝ լոկ ... ի Բաղոմ տուլնուկոյ գրէր»։ Արդ՝ եթէ այդ վարդապետները իրենց գրուածքներով յայտնի էին Մեկենասին և Գրչին, ինչու նոքա իրենց փարթամ Շարականի մէջ չը-պիտի շարէին և նրանց գրածները։

Արդ գալով շարականիս յարգոյապատիւ մեկենաս տէր Յոհաննէսի և նրա ձեռքով հոգի տուած շարական խմբագրող Սարգիս գրչի ապրած տարիներին, ես իմ կողմից ընդունում եմ որ Մեկենասը և Գրիչը ապրած պիտի լինին ԺԱ և ԺԲ-րդ դարերի մէջտեղում մեզ անյայտ մի անորոշ ժամանակ՝ ուր նոքա արդէն քաջ ծանօթ լինելով իրենցից բարձր գաբերում գրուած շարականների հետ, ուստի և իրրև հին, ամենքին յայտնի և ամեն տեղ մուտք գտած շարականներ համարելով նրանց, Մեկենասը և Գրիչը միմեանց խորհրդով գրել են նրանց կրճատ ձեւով, կրճատ ձեւով միայն չգրելով այն հին շարականները, որոնք երկուսի ջանքով այս և այն տեղերից գտնուել են յուսոյ և պատկանում են հին դարերի։

Իսկ ինչ էր կրճատ գրելու պատճառը և նրա խորին դաղանիքը. ա. կրճատ գրութեամբ մի կերպով յիշեցնել շարականների արտագրութեամբ զբաղուող ժամանակի ողջամիտ գրիչներին, թէ այն շարականը հին է, նոր չէ. բ. թոյլ և տկար յիշողութիւն ունեցող ժամասաց գպիրներին մի նշանով հասկացնել մրտաբերել և որոնալ տալ իրենց կարդացածը, եթէ ենթադրենք, որ նոքա արագ արագ սերտում և բերան էին անում մի շարական իրենց տանը և մոռանում եկեղեցում. և գ. իզուր ժամանակ չծախել, իզուր թուղթ ու թանաք չվատնել, նա մանաւանդ իզուր աչքի լոյս չթափել նրանց տաժանելի արտագրութեան վերայ, երբ նոքա յայտնի էին ամենքին, և նրանց համեղ ձայնը ամենայն օր լսում էր սուրբ եկեղեցեաց յարկերի տակից։ Ահա այս է, որքան մենք ըմբռնում մենք կրճատ գրելու խորհրդաւոր պատճառը, և որքան որ մենք կարողացանք ճշդել և լուծել այս առեղծուածը Պայր Աթոռիս մատենադարանի և այլ երեք օրինակ 1581—ժ, 597—կէ և 599—կԹ թուահամարներ կրող կրճատ Շարականներով։

Ի մի բան, թէ Մեկենասը և Գրիչը ապրած պիտի լինին ԺԱ և ԺԲ-րդ դարերի մէջտեղում դրա նշանաւոր և անհերքելի ապացոյց-

ներից մինն է և այն, որ նոքա դեռ նոր ծանօթանալով սրբազան Գրիգոր վկայասէրի, Շնորհալի Ներսէս Հայրապետի և նրանց յաջորդող առաքելապատիւ սուրբ հայրերի աննման գրուածքների հետ, վասնորոյ և դեռ նոր բան համարելով նրանց, նոքա մեղ ընծայում են այդ ամենը ամբողջ ամբողջ գրութեամբ, ի հարկէ բոլորիս համար հասկանալի այն դիտաւորութեամբ, որպէս զի նոքա դարէ ցդար անվնաս և անաղարտ մնան, և անվարժ գրիչներից փոփոխակի արտագրութեամբ չկորցնեն իրենց այն իսկական սիրուն պատկերը, ինչ որ ամենասուրբ Հոգւոյ շնորհաց գրչով գեղեցկապէս տքնեցին գծել նրանց քրանաթոր հեղինակները։ Մեկենասի և իւր հաւատարիմ Գրչի յիշեալ դարերում ապրելու աւելի նշանաւոր ապացոյցներից մինն է և այս, որ նոքա իրենց ձեռքով կազմած Ցօնացուցի մէջ յայտնապէս նոր համարելով այդ շարականները և տակաւին աղդիս վստահութեանը թերևս չարժանացած, թէև դնում են նրանց հների կողքին, սակայն այս անում են նոքա ամենայն անվստահութեամբ և երկչոտութեամբ, ուստի և ժամանակին տարաձայնութեան տեղիք չտալու համար, ամեն մի նոր շարականի կողքին աւելացնում են այս զգուշացուցիչ խրատը—«ԷՐԷ ՅԱԴ ՊՇԷՐԸ ԱՍԱ. Ա ՐԷ ԱՂ» այս ինչ ասա, որոնցով իսկապէս ստուգւում է մեր ասածը, որ արդարև Մեկենասը և Գրիչը ապրել են ԺԱ և ԺԲ-րդ դարերի մէջ տեղում։

Ահաւասիկ Ցօնացուցից օրինակներ. «Սոյեմբեր. Ը. Հրեշտակապետացն Դարբիելի և Միքաելի. և ամենայն երկնային զաւրացն. հցն. և շարակներ զնորն ասա. և թէ ոչ. դկ. Զինուորութիւնք հրեշտ[ակաց]». թղ. 227։

Նոր համարուած շարականները են. «Դեկ. օրհ. Որ յանէից ստեղծեր Ա Անդադար յերկինս։ զկ. հրց. Անսկիզբն հայր։ մծ. Աթոռ անճառ բանին։ մէ նոր մծ. Սուրբ կոյս մարիամ։ ձդ. ո. Որ ի հրեղէն զաւրաց երկնից։ տ. Անմահ արքային։ դկ. մկ. Երկնաւոր հաւատ ընդդրեալ։ Ա ձշ. Այսաւր ուրախացեալ», որոնք գրուած են բաց ձեռով և գրել է Ս-ՐԷ ՆԷՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ. թղ. 191։ 192։

Մի այլ օրինակ. «Դեկ. աւրն զաւրացն հաց. նահատակացն սրբոց. Վարդանա. Վահանա, հմաեկի. տաճատա. արսենի, խորենա. արտակա. գարեգինա. Եւ երկու եղբարց իւրոց. Եւ — և Ը. վկայեցն որ ի սմին աւուր կատարեցան. Եւ յետ կատարման Սրբոց վարդանացն. Ղոմեկոսի. և. Բ. վկայեցներ. Եւ վահանա. որդւ վարդանա. և որոց ընդ նոսա. որ ի դղեկին կատարեցան. Եւ էր թիւ զաւրացն հաց. վարդանացն. որք ուրեք ուրեք. յառաջ և յետոյ. ի տեղիս տեղիս կատարեցան, և են միահամուռ. թիւ սրբոց վկայեցն. կղ։ և են բարեխաւս առ աստ. վասն աշխարհի. Ա՜հնութի՜. և համբարձի. զնորերն ասա. Եւ թէ ոչ. մարտիրոսաց, հցն. Որ զհրաշափառ քո զաւրութի՜»։ թղ. 230։

Այդ Դ-ՐԷՐԸ են. «Շարական. Սուրբոց. Վարդանացն. Աւրհնու [թիւն]. դկ. Անթառամ սիրո ծնունդք Ա դկ. հր. Նորահրաշ պսակաւոր», որոց առաջինը ըստ վկայութեան Գրչի գրել է ՅՈՀԱՆԷՍ ԽՈՀԱՆՅԱՆ, իսկ երկրորդը ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ. թղ. 200։ 204։

Ահա մի հաղուագիւտ Շարական և Ցօնացոյց, որոնցով կարելի է ստուգել և կարդի դնել իրենց հեղինակներով թէ Ե-ՐԴ դարից մինչև ԺԱ-ՐԴ դարը ի՞նչ շարականներ են գործածուած եղել եկեղեցում թէ ԺԱ-ՐԴ դարից մինչև ԺԲ-ՐԴ դարը ի՞նչեն աւելացել այդ հների վերայ, և թէ ԺԳ-ՐԴ դարում դարձեալ ի՞նչեն աւելացել այդ բոլորի վերայ. ի մի բան,—ո՞րքան շարական ունինք, որո՞նք են երգւում և որոնք են մնացել անգործածելի. և մենք մեր կարողութեան չափ կաշխատենք լուսաբանել այդ բոլորը և այլ ընտիր շարականներով, որոնք դառն ժամանակների մէջ բարձած իրենց թղթերի վերայ մեր նախնի հարց ձեռքի աշխատանաց պտուղները, իրրև մի օրանարեր սայլ բերում թափում են այն կալի մէջ, որի համար ասում է Աստուածորդին—«Ցուն իմ տուն աղօթից կոչեսցի»։ Ահա այդ փառաւոր Ցան փառքերից մինը։

ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՄԱՏՈՒՆԻ.

(Շարունակելի)։